

մէջ իրենց հարստահարութեանց վերայ լուռ չտեսնող կենան : Գիշ ժա. մանակէն երկրին մէջ հոգիներն անգամ պիտի գիտնան թէ իրենց բարորութիւնն Անգղիոյ խնամոյց առարկայ է : և երբ արդարութեան վրայ մտաւորութիւն ունենան, իրենց կրօն մէջ մի հարստահարութեան համար բոլոր պիտի բառնան : Հոսկ ուրիմն, Անգղիոյ պաշտպանութիւնը խնդրելու իրաւունքը հաշտելի պիտի գործէ, և կենաց ու ընչից ապահովութեամբ հոգին արժէքն և զայն վարելու և ցանկելու իրաւունքը պիտի բարձրանա : Իւր աշխատութեան արդիւնքը վայելչու յոյսն երկրագործին մեծ քաջալերութիւն մը պիտի ըլլայ : և երբ երկրագործութեան յառաջդիմութեան հետ ճանապարհներ չիտնին, երբ կարաւանք աներկիւղ ուղեորին, և երկրամիջիններ գտնուին, վտանգութեամբ կրնանք բարդաւանդութեան նոր դար մը գուշակել այն երկրներուն համար, որք աշխարհի մեծ անցից տեսարան եղած են, բայց այս վերջին ժամանակներու երեսի վրայ մնալով ազգատաքած և հարստահարուած են : Անգղիա, դահայեցիկ կերպիւ 'ի նպատակ Հայոց գործելով, կէս վայրենիներ չպաշտպանել, այլ ազգ մը, որ պատմութիւն, գրականութիւն և ինքու մ'ուներ, որ իրօք իւր ընդունակութեան ապացոյցները տուած է, քանզի իւր զաւակները Մանչեսթըրէն մինչև Հնդկաստան ամենէն յաջողակ վաճառականաց և արտադրողաց կարգը ճանչուած են : Բաւական է որ Հայաստան մէկ կողմանէ Ռուսաց, և միւս կողմանէ Գրիգորի դէմ պաշտպանուի : Արեւելեան մեծ խնդրոյն վերջնական լուծման կարևոր տարր մը պիտի կազմէ :

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտոն 6 օգոստ.
Տէյլի Նիւս լրագիրը կրէ թէ սոսա է այն լուրը որ կը ծանուցանէ թէ Պիւմարը իշխանն Եգիպտոսի գործոց համար միջազգային անօրէնութիւն մ'առաջարկեր է : Նուարդի փառան, կրէ յիշեալ լրագիրն, Եգիպտոսի մէջ խառն դատարաններ հաստատելու վրայ Պիւմարը իշխանին կարծիքն հասկնալու համար Գիւսինկէն գնաց :

Այս առաջարկ հասած հետաքննէր

Լոնտոն 7 օգոստ.
Երեսփոխանաց ժողովը պատերազմական գործոց նախարարութեան խնդրած ծախսոց յաւելումուն համակրութեամբ քուէարկեց :

Կիպրոս կղզւոյն նկատմամբ սրտեւրապական գործոց նախարարն բաւ թէ Հնդկի զօրքն չորս հինգ շարակէն Հընդկաստան սղտի վերադառնան, և թէ կղզւոյն պաշտպան գործութիւնն երկու վաշտ զօրքն և ութ թնդանոթէ պիտի բաղկանայ :

Առաւմտութիւնը խորհրդարանին անգամ Սըր Հ. Տրուսմընտ Ուոլֆն Անգլիոյ ներկայացուցիչ անուանեց Արեւելեան Բուլետին վարչական և քաղաքական վիճակը կանոնաւորելու պաշտօն ունեցող միջազգային յանձնաժողովին մէջ :

Լոնտոն 7 օգոստ.

Օսմ. Բոնս.	14 15/16
Փոխ. 1865	21
» 1869	49 3/8
» 1871	51 1/2
» 1872	30 1/2
» 1873	47 1/2
» Եգիպտ.	71 1/8
Անգլ. Բոնս.	95 1/16

Փարիզ 7 օգոստ.

Օսմ. Բոնս.	14,97 1/2
------------	-----------

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝
Նազիրմպէյ Մուսուլի կառավարիչ անուանեցաւ :

Երեքշաբթի օրը Բարձր. Մեծ-Եպարքոն և Թեղանօթարանի և Երևմտից նախարարները Երևանի պալատն երթալով խորհուրդ ըրին

վեհ. Սուլթանին նախագահութեամբ :

Սոյն խորհրդին ներկայ գտնուեցաւ նաև Պէրլին Տէրութեանց խորհրդին Օսմանեան երկրորդ պատուիրակ Մէհմետ Ալի փաշան :

Երեքշաբթի օրն արքունի նախարանքն երեք մեծ չորեքնա վարնա գնացին՝ հոն գտնուող Օսմ. զօրքը և Պոլիս փոխադրելու :

Թուրք լրագիրք կը ծանուցանեն թէ Կայսերական կառավարութիւնը Եաֆայէն երեսօղէմ երկրամիջին շինելու արտօնութիւն չնորհար է Անգլիական ընկերութեան մը :

Նոյն լրագիրք կը ծանուցանեն նաև թէ ուրիշ Անգլիական մեծ ընկերութիւն մ'այ Հայաստան փաշայէն Պաղատա երկրամիջին մը շինելու արտօնութիւն ստանալու վրայ է : Յիշեալ երկրամիջին ճիւղեր պիտի ունենայ Եօզղատ և Էնկիլարի : Ուրիշ ճիւղ մ'այ իսկէն Երևանէն ու Թուրքիոյ Միջագետաց գլխաւոր ուղեղին պիտի կապէ :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍԷԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ

26 յուլիս չորեքշաբթի իրիկուն	46,22
27 յուլիս հինգշաբթի առաւօտ	
բացուեցաւ	46,20
կէս օրին	46,15
Բուլետին երկրամիջին	Ֆր. 62
Թղթադրամ	Իր. 290

ԸՆԴՈՍՏԱՐԱՐԱՐԵԹՈՅ

Կ. Պոլիս 26 ցուլիս

Սոսիթի թէնիսայի բաժ. Անգլ. Իր.	4,22
» ֆոթսօկիսթիստ	3,30
Կ. Պոլսոյ Պանթըյին	6,
Քրէտի թէնիսայ	6,
Քրէտի Օսթրո-Թիւրք	
Փոխ. 1863	Ֆր. 400
» 1865	» 402
» 1869	» 93
» 1872	» 29
» 1873	» 83 50

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ

Ս. Պատրիարք հայրն, որ քանի մ'օրէ 'ի վեր Գընալը կղզին կը գլուխուր, իւր հետն առնելով Հոսովմեական ազգայնոց պատրիարքական փոխանորդ Գեր. Գրիգոր վարդապետ Էնֆիէճեան և Բողոքական ազգայնոց ազգապետ Միծ. Յակոբ Էֆէնտին, և երեքշաբթի օրն այցելութիւն տուաւ Հորնպի ժողովարանին, ՍԱԷՔ. սանտար գրաստանն, ուղեկցութեամբ իղմիրական Գեր. Մատթէոս Եպիսկոպոսի, իկիւպաշեան Աստա Էֆէնտիի, Մէրեմ-Գուլեան Յարութիւն Էֆէնտիի, Սթիմարաճեան Գեորգ Էֆէնտիի և այլ քանի մը կղզերանակ ազգայնոց :

Ծովագետ սիրայիր ընդունելութիւն մ'ըրաւ Ն. Սրբազնութեան և ժամու մը չափ խօսակցեցաւ Հայոց վիճակին վրայ : Ն. Սրբազնութիւնն հասկցուց Հորնպի ժողովարանի թէ Անգլիա իւր պաշտպանութիւնն այն ատեն իրապէս օգտակար պիտի գործէ Ասիոյ համար, երբ Հայկական տարրը մասնաւոր հօգւածութեան առաքելայ ընէ : Ջրեց այն սխալ կարծիքներն որք Հայոց նկատմամբ յայտնած էին ոմանք՝ անտարակոյս մասնաւոր նպատակներով, Յաւելոց թէ Հայոց ազգին իղձերն օրինաւոր էին և երկրին ընդհանուր օգտին կը յանգէին, որոց համար ազգին ամեն մասունքն համամիտ են ըսաւ, և «ապացոյցն այս է որ ազգիս Բողոքական և Հոսովմական մասանց գլուխներն աւասիկ ինձ հետ միաբան կուգան խնդրել Ձեր Վանութեանն որ համարէն Հայոց իղձերը Ձեր մարդասէր կառավարութեան հազարգելոյ շնորհ ընէք » :

Մեծ տպաւորութիւն ըրաւ ծովագետին վրայ ազգին երեք մասանց գլուխներուն միաբան յայտարարութիւնն, և խոստանալով հաղորդել

զանոնք իւր կառավարութեան, յուսադրեց զՍրբազն Պատրիարքն թէ Անգլիա լուրջ նկատողութեան պիտի առնու ամեն օրինաւոր փափաքներն ու Ասիոյ բարդաւանդները նպատակաւոր բոլոր պարագաները :

Եւտոյ ժողովարանն առաջարկութեամբ Նորին Սրբազնութիւնն և իւր ուղեկիցք Տէվաթթէյընը գրաստարը պարտելու գնացին, որոյ հրամանատարը Նմանապէս խիստ համակրական ընդունելութեամբ նաւուն ամեն հետաքրքրական մասերը պաշտպոց և մեքենական փորձեր ընել տուաւ :

Ս. Պատրիարքին մեկնած ժամանակ զրահաւորներէն մին ողջունի թնդանօթ արձակեց :

Երէկուան Լրագրոյ մէջ Չմշկաձագէն գրուած հետեւեալ դէպքը կը կարդանք, որ ուրիշ տեղերու Հայոց քաջալերական օրինակ մ'ըլլալու արժանի է :

«Վերջին օրերս Խօղաքի Գիւրգերն Հայաւանի Օձ գիւղին վրայ յարձակելով, բոլոր արջաւորները կը յափշտակեն կը տանին : Օձ գիւղացիք, որ ամենէն աւելի կողոպտուած ու աղքատացած ժողովուրդն ըլլալով, իրենց արջաւոր զառ ուրիշ մէկ բաներին չէր մնացած, իրենց միակ այս գոյքին ալ յափշտակուիլը տեսնելուն պէս, կտրիճութեամբ իրկոյն զէնք առնելով կը գիւղին Խօղաքի քրդաց վրայ արջաւորներն հաւաքուին :

«Գիւրգերն Օձ գիւղացիքը տեսնելուն պէս՝ զանոնք հրացանի կը բռնեն և երկու հոգի զարնելով կը վիրաւորեն. տոթ վրայ Հայերն ալ փոխադարձ կրակ ընելով քանի մը քիւրդ ծանրապէս կը վիրաւորեն, և Հայ կտրիճին մէկը՝ իւր վրայ յարձակող քրդին դէմ ուղղած հրացանը տեսնելով որ կրակ չառներ, կը թռչու զէնքը և քրդին վրայ խոյանալով՝ նորա ձեռքի թուրը կը կորցէ և անով քրդին գանկը երկուքի կը ճեղքէ :

«Հայերն այսպէս զինաթափ ընելով քրդերն և զանոնք ցիր ու ցան հալածելով, թէ՛ իրենց արջաւորները կառնուին և թէ՛ քրդաց թողած զէնքերը կը ժողվեն և կը գառնան գիւղերին :

«Հայը կնամարդի կարծոյ Անգլիայի թող տեսնեն թէ՛ Հայը կը նմանի՝ իրենց կարծած կնամ մարդուն : »

Ահա տակի ազգային ժողովոյ վերջին նստին մէջ Հայկական խնդրոյն վրայ Ս. Պատրիարք հօր տուած աւելիութեանց պատճէնը :

Տեարք երեսփոխանք.

Ամիս մ'առաջ այն այս պատկառելի ժողովին մէջ պատասխանելով հարցման մը զոր ազգաւոր ոմանք երեսփոխանք կողմէն ինձ ազգային խնդրոյն նկատմամբ, Եւրոպական տէրութեանց քով մեր ըրած ջանքերն և գտած համակրական ընդունելութիւնը զինի յառաջ բերելու՝ կըսէի ձեզի. «Ես չեմ միայն աշխատող, այլ ի՞մ է բոլոր պատասխանատուութիւնն : »

Դեռ ժամը չհնչեց՝ ամբողջ այս պատասխանատուութեան զի կրկին է նա. մին այսօր Հայոց այս մեծ ժողովին առջև, և միւսն ազգին առջև, յանցեալն, 'ի ներկային և յապագային, և պատմութեան առջև : Այո, ես այս պատասխանատուութիւնը չառ աւելի ծանր զգացի քան զոր կրնաք երեւակայել, և չգագի զայն՝ միայն ձեր առջև՝ որ այսօր, ուսն ազգը կը ներկայացնէք, այլ և

զգացի զայն՝ մեր Նախնեաց հոգիներուն ու յիշատակին առջև՝ որ կանգնեցին և որ պահեցին զՀայ ազգն ու զՀայաստան, և զգացի զայն՝ այն անհամար Հայ սերունդներուն առջև՝ որք պիտի յաջորդեն մեր սերունդին : Եթէ երկրորդն այս պատասխանատուութեանց շատ աւելի ծանր է ու տհեղ քան զառաջինն, ներեցէ՛ք ըսել հիմակոց՝ ես այդ պատասխանատուութեանն բընու չեմ վախնար. զի ամբողջապէս զենիմ պատասխանել, և խղճմանքս անդորր է և զուարթ, իսկ աւելի փափուկ է առաջին պատասխանատուութիւնս, այն որ կոչեալ եմ այսօր կատարել ձեր առջև, և եթէ իմ բացատրութիւններս գոհ չընեն զձեզ, ուրիշ բան չմնաք ինձ ընել, այլ պատմութեան գաղտնականին ապաւինիլ, որուն ետեւ թաղեալ եմք ամենքս ալ, և ես, և դուք, և որք այս շրջապատէս գուր կը խօսին և կը գրեն :

Եւ զայս ըսելով ո՛չ թէ բնաւ նըւազ կուզեմ զգալ ձեր գաղտնի իրաւունքն ու իշխանութիւնը, այլ զի յանուն ազգային պատկառելի շահաց՝ պէտք է նախամեծար համարիմ կրել գաղտնաբացութիւն ա. նիւրա՛ն տես ազգիս կողմէն, քան թէ հրապարակել զամենայն : Եւ եթէ ամեն տեսակ հալածանք, գաղտնաբացութիւն, պատիժ և փորձութիւն յանձն չէի տուած առաջին օրէն, զգուշացնելով զայս այն ամենին, և զիս միայն կէտ նպատակի ընծայելով, թէ յանձն չէի առած զուսիլ, ինչո՞ւ ուրեմն ձեռնարկեցի յայս գործ :

Տեարք երեսփոխանք.

Հայկական խնդրը, իւր արդի ձևին մէջ ինքրիմէ չմնաւ, այլ ընդհանուր Արեւելեան խնդրէն ծագեցաւ : Ահա տակի 'ի նշան : Հայոց խնդիր մը կար տասն և աւելի տարիներէ 'ի վեր, մինչդեռ ո՛չ Հէրոէք-Պոստայի խնդիր կար, ո՛չ Պոլկարաց խնդիր քաղաքական ձեռով, Հայաստանի Հայոց կրած հարստահարութեան խնդիրն էր այն՝ ազգին և տէրութեան մէջ մնացած էր. և ազգը անընդհատ տարը տարի, իր յանձնաժողովներով, իր Բողոքական կան ժողովներով, իր Երեսփոխանական ժողովներով, իր Պատրիարքներով, այս հարստահարութեանց բարձունքը կը հայցեր Բ. Դանէն. Ահա՛ այս էր միայն Հայոց խնդիրը, Եկաւ Հէրոէք-Պոստայի խնդիրը՝ և ապա Պոլկարայի խնդիրը : Այս երկու խնդիրներուն մէջ խառնուած էր հարստահարութեան խնդրոյն հետ ազգային ինքնօրինութեան խնդրին ալ : Այս գառնակները ապատմութեան գործը պարզեցին իրենց օրինաւոր տարիքէ մ' : Արեւհեղուութիւնն Եւրոպայի միջամտութիւնը հրաւիրեց, և այս մեծ կայսրութեան գործի ուրիշ մեծ կայսրութիւն մը յանուն Գրիտտոնէութեան ամենէն աւելի ձայն բարձրացուց : Տէրութիւնք 'ի ժողով գումարեցան 'ի Պոլիս : Ինչ ըրաւ Հայոց ազգը. օրինաւորութեանց դուրս չելաւ : Հայերը գոհ էին որ Օսմանեան տէրութեան ներքեւ էին. այլ իրենց վիճակէն դառնապէս դժգոհ էին. և օրով հետեւ ընդհանուր բրիտանիկ վիճակը բարեփոխելու խօսքի կըլլային, Հայերն ալ ընդհանուր բարեկարգութեանն սպասեցին իրենց վիճակին բարեւթումը :

Չեր Պատրիարքը, գիտէք արդէն, Տեարք երեսփոխանք, պարազ չկեցաւ աշխատեցաւ Բ. Դանէն քով, աշխատեցաւ դեսպանաց քով : Այլ դեսպանաժողովը, փոխանակ ընդ-

